

կայութիւն իրենց ուխտաւորութեան(*)» (Enl. հատոր Ա. էջ 124):

12. Ս. Կուսի Գոսիին սպիտակ ժայռը. — Հին աւանդութեան մը համաձայն, Ս. Թովմաս առաքեալը (ըստ Հայոց՝ Ս. Բարթողիմէոս) որ Տիրամօր մահուան ժամանակ միւս առաքեալներուն հետ չէր գտնուեր, տեսաւ որ Ս. Կոյսը երկինք կը վերափոխէր սպիտակ ժայռ կոչուած տեղէն. Ան երկինք բարձրացած միջոցին իր գօտին ձգեց քարին վրայ և Առաքեալը առաւ զայն(**): Այս աւանդութիւնը Ե. դարուն գոյութիւն ունէր, ինչպէս կը յիշեն Նիկոփոր և ուրիշներ: Նոյն քարը ուխտաւորներուն յարգանքին առարկայ եղած է միշտ: Այս սպիտակ ժայռը կամ քարը կը նայի դէպի հիւսիս և կը գտնուի Զիթենեաց լեռան ստորոտը, յարակից այն գետնին՝ զոր Սուլթանը Ռուսիոյ շնորհեց 1883ին, բայց ռուսական սեպհականութեան մաս չի կազմեր ան, այլ անկէ բաժնուած է քարէ պատով մը (Ham. էջ 365):

(*) Théodorich ուխտաւոր ուղեգիրը 1172ին կը գրէ. «Գերսեմանիի եւ Քրիստոսի աղօթած սեղերուն միջեւ Զիթենեաց լեռան կողմը, այն սեղը ուր ամբոխը արմաւենիի ոստերով մեր Տէրը դիմաւորեց, կը գտնուի քարերով շինուած բարձր սեղ մը, ուր Ծաղկազարդի օրը պատրիարքին կողմէ արմաւենիի ոստեր կ'օրհնուէին: Նոյն սեղը մօտ էր այն սեղերուն՝ ուր Յիսուս ըմբռնման եւ մահուութան գիշերը կը դողար եւ գեթին կ'իյնար, երբ մասնիչը եկաւ լապտերներով, ջահներով եւ զէմֆերով եւ շրէից մեծերը կալանաւորեցին զԱնիկա ու արին Կայիափա քահանայապետին եւ յետոյ Պիղոսոսին» (P. T. S. հատոր Ե. էջ 40):

(**) Կ'աւանդուի թէ երբ Ս. Կոյսը գօտին վար ձգեց Թովմասին՝ իր պատկերը նկարուած էր անոր վրայ, ու այժմ պահուած է ան Թօսֆանայի Փռաթօ քաղաքի մայր եկեղեցիին մէջ (Մար. Ա. հատոր, էջ 301):